

1843 ԲԱԶՄԱՎԵՓ 1914

* ՀԱՆԴԻՍԱՐԱՆ *

ՀԱՏՈՐ
ՔԲ
ՓԱՏԱՐԱԿԱՆ
Թ. 2

ԱԳՐՈՑԻ - ԲԱԽԱՌԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ
ՀՅ ՀՅ ՀՅ ՀՅ ԱՄԱՐԵՐԱ ՀՅ ՀՅ ՀՅ ՀՅ ՀՅ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՀԻՐԻԹԻՒՆ ՍՈՒՐ ՄԵՄՐՈՎԲԱՅ ՎԱՐՈՒՅ

ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՑ ԳԻՒՏԻՆ*



Վահունիք նախապատմական ժամանակներուց սեփականեր էին իրենց ծարօնոյ զաւառն։ Ըստ Պատմահօրն մեր բնիկ նախարարական ցեղին վահագնի որդիք ժառանգեցին ծարօնը, և հաստատեցին իրենց կրօնական պաշտամանց կեղրոնն յլլշտիչատ։ Կայն մեհեանցն և տեղին սեփականութիւն էին թագաւորացն Հայոց¹։ Վահագն իջեր էր յերկնից և անցեր էր ի շարս աստուածոց և ուներ իւր պաշտամունցն Աշտիշառու մէջ։ Արտաշէս Ա. բարեացակամ առ իւր ազգայինս, Հերակլի քաջազործութիւնը նմանեցնելով իրենց վահագնին, Երակլի պատկերն կը զրկէ ի Հայս, որպէս զի յաշտից տեղիս զրուի։ Սակայն Ցիգրանի կեղծ ցասումն ընդ յառաջադիմութիւն և ազդեցութիւն վահուն նեաց ազգին, բաւական եղաւ, Վաղարշակէն մեծապէս պատուած քրրմական պաշտօնվ, ընկենուլ վահունիքը իրենց ծանուտերական Պա-

* Տես Բազմավեպ 1914 թի 1 էջ 1.

1. Ազա հրաման տայր (Խոսրով) ... յեւթի բազին մեծնիցն ուխտաւոր լինել պատկերաց կող զին պաշտաման Ավելակ ցւոց և սպիտակ նոխացն զիր ազգին արշակնեաց զայութնեացն պաշտամանց տեղին մեծարէր... Ազաթ. էլ Յնթ-Յնթ. (Արմավիր-Բագարան, Անձ, Փել, Մորդացն, Ենէզ, Բասարակնիշ) Բոր զայս եօթն՝ էր մի ուրիշ Ռւթերող՝ Վաշարից տեղին Եւ իւրեա եկն ենա ի Ամաման Հայոց, լուս Գրիգորիսն թէ Վահագահան մեծանն նացեալ է յերկին ծարօնոյ... ութերորդ պաշտօն Հովակիւլ, անուանեալն վիշտաբաղն Վահագնի, յաշտից տեղին (Աշտիշառն) թագաւորացն Հայոց Մեծաց. (Ազաթ. էլ 606):

առևել և Քրմութենէն և անոնց սեփական գիւղն Աշտիշատն զրաւել յարքունիս¹. ինչո՞ւ, որովհետև համարձակեր էին ինքնազլուխ Երակլի պատկերն, իրբե իրենց վահազնին, կանգնել յաշոփ տեղիս: Ակայն իսկական պատճառն այլ էր:

Արշակունի թագաւորներու երակներու մէջ, իրբե վահագնի սերունդ, հաւասարապէս բրմական արինն ծնունդի ծնունդ կ'անցնէր յաջորդարար: Տիգրանի աշխարհակալական յաջողութիւնը ծնուցին նորա մտցի մէջ միապետական տենչն, և այդ գաղափարին հասնելու համար, հարկ համարեցաւ միացնել իւր անձի վրայ թագաւորականի հետ նաև Քրմապետական մականն, բայ օրինակի Հռովմէական կայսերաց: Աւստի Տիգրան թագաւորութեան սկիզբէն իրբ իւր կրօնասիրութեան ապացոյց «առաջին զործ զմէնեանսն շինել կամեցաւ²»: Կապաղովկիայէն եկած բուրմերն, չուզելով վիրաւորել իրենց ազգայիններն, ըղձութիւն պատճառեցին, և բերուած անդրիքը իրենց ուզած մեհենատեղիցն զետեղեցին յԱնի, ի թիւ, և յԵրիզա: Խակ Վահունիք չկասկածելով իրենց ազգակի բարեացակամութեան վրայ, զոր վայելեր էին Վաղարշակի և Արտաշէսի ժամանակ, զոհ գնացին Տիգրանի նախանձուն և ազգակործան ատելութեան. որով ոչ միայն ստացուածքնին զրաւուեցան յարքունիս, այլ և կորուսին Տանուտէրական պատիւն կամ բարձն, և ինկան փոքր կամ կրտսեր նախարարութեանց կարգն. որք վայելէին միայն ազնուականութեան մենաշնորհն, աւելի իրբ տիտղոս մը քան իրաւունք և իշխանութիւն. ուստի յայնմէետ Վահունեաց Աշտիշատու տունն անպաշտօն պիտի կոչուէին «Կարճազատք»: Հազուազիւտ բառ մը որ շատ խորհուրդներ կը բովանդակէ իւր մէջ³:

Արշակունի թագաւորներ սիրեցին զքրմութիւնն և ուզեցին զուգել իրենց տան և ազգի վերայ: Երուանդ արշակունին իւր տանը աւելի փայլ մը տալու համար, հնաւանդ Արմաւիրն անշրացնելով, բագարան կը հիմնէ և հոն իւր եղբայրն Երուազ քրմապետ կը կարգէ: Երուանդ այս տեղափոխութեամբ ուզեց հարուածել ուղիղ գծով իջած բնիկ հայկական հարստութիւնն և ընդհակառակն ընտելացնել իւր տան հետ Հայոց ժողովուրդն, որ սիրահար իւր վազնջական տօնախմբութեանց, աշխարհօրէն բազմութեամբ կը թափէին ուխտագնացութեամբ գլխաւոր մեհենատեղիցն⁴:

1. Յասուցեալ ընդ վահունիս, թէ ընդէր յիւրեանց սեփականին իշխեցին կանգնել զպատեն Երակէ, առաքեալ ի նորին օրէ, ընկենու զնուա ի քրմութեամբ և զգիւղն յարթունիս առնու, յորու պատկերն կանգնեցան» (Խոր. Բ. Ժ. թիւ. 188).

2. Խոր. Բ. Ժ. թիւ. 188.

3. Տիգրան նոյնապէս անզթութեամբ վարուեցաւ նաև Արուրացան ազգի հետ, զոր Վաղարշակ կողմակալ կարգեր էր զգեզերը հայկական խօսից, Սիսական և կաղման անեմակեց՝ յԵրարդորդական անուն Մեզ չի թուիր որ սրա Մարաց կամ Մեղաց լինէն: այլ իրենց զինանշնի պատճենն կուռուց են Մարաց Տէր, Վաղարշականից՝ որոց ընդիմ կուռած է վահազ, ինչպէս ասացին, թիւն իրեն ազգակաց և թագաւորազարմից: Նոյն արիւն է որ կը սոզայ Տիգրանայ երակներուն մէջ: սոցա անզուու Վահունեաց իրաւութեան պատճան կալով իրենց և զոհ շացաց են անոն փառախրամաքան: Նոյն քանի կրինուած է նաև Արտաշես իւր ֆամանէկ, Արտաշազի զրաւութեամբ և Սաթիկայ հրապարանցվ:

4. Բայց Երուանդ շինեալ զբաղեցն իւր, և փոխեալ անդր զամնեալի ինչ յԱրմաւրայ ուրոյն ի կոսցն... զի մի՛ ի զալն և զուն անդ աշխարհէ, ոչ զգուշութեամբ պահեցի թաղացն (Խոր. Բ. Խ.):

իսկ Արտաշէս Բ. զեռ աւելի առաջ կ'երթայ: Արուանդին յաղելով և Երուազին սպաննելով, ասոր յաջորդ կը կարգէ իւր ընտանի կամ ազգակիցներէն մին, Մողավաշտ¹ տիտղոս մ'եւս աւելցնելով վրան, ըստ օրինակի Հռովմէական Pontifex Maximusի, որ Հռովմէական կրթութեան հետևանք մ'էր, լինելով մին անշուշտ այն թագաւորացուններէն որոնց կամ իրբ պատանդ, և կամ յօժարակամ կը դրկուէին Հռովմ քաղաքակրթուելու, ինչպէս շատ անգամ կը յիշատակէ Տակիտոս իր Տարեգրութեանց մէջ²: Այս չափով չբաւականանալով, արքունական գաւաններու զիսաւոր մեծնատելոյն վրայ, որ էր Անի, քրմապետ կ'անուանէ զիւր որդին Մաժան: Աչ միայն Անի, այլ և Թիլ, Երիգայ և Բագայառինջ կամ Բագաւան, Մաժանի իրաւասութեան տակն էին, ուր ըստ Հռովմէական ճոխութեան թաղուած էր զամրացանի մէջ: Տիգրան Գ. իւր եղոր և քրմապետի շիրմին վրայ կը կանգնէ բազին³, (Արքավայր), և այսպէս զեղբայրն ի կարգս աստուածոց կ'ամրապնայ, ինչպէս արած էին Հռովմէական կայսերը սկսեալ Աւգոստուչն՝ որուն զանգան բագիններ կանգնեցին Սպանիոյ, Գաղղիոյ և Փոքր Ասիոյ բաղացներէն ոմանց:

Ապա Վաղարշ նոյն տեղուոյ մէջ, Հայոց Նոր Տարւոյ սկիզբն կարգեց տօն աշխարհախումբ ի մուսսն Նաւասարդին, որ էր միրելի և աւանդական տօն մի Հայաստան աշխարհի, աշխարհախումբ բազմութիւնն հիւրասիրութիւն գտնելով և զնիերէն վայելելով, ուխտաւորներն, եկող գնացողներ, զեղեցիկ տպաւորութեան տակ կը վերադառնային իրենց տներ, այսպէս այդ քրմաց և քրմապետաց համբաւն կը տարածուէր Հայաստանի չորս կողմերն⁴:

Տարակոյս չկայ որ Խոսրով նպանպէս շարունակեց կը ել քրմութեան պատիւն, և ինըն է որ կը հրամայէ եօթն բագիններու վրայ զո՞ներ մատուցուին աստուածոց շքեղ հանդիսաւորութեամբ, որ ճշգրտի կը յիշենէ Հռովմէական յաղթանակներու և զոհազործութեանց տօնախմբութիւնն⁵: Ինըն է որ նաև բաժին կը հանէ յաւարէն և մեծամեծ պարգևներ կը շնորհէ բռումերուն, իբրև ենթապաշտնէից⁶:

Խոսրովու եղերական մահուամբ գոզցես Արշակունիաց համար կորսուած էր արքայական թագն և քրմական մականն, սակայն Սասսնեանն Արտաշիր, հակառակ մեր ակնկալութեան մարդասէր վարմունք

1. Եւ ի տեղի նորա ի վերայ բագնացն (Բագարանի) կացուցանէ զըմուամի Արտաշիսի, ապակերտ մոզի ուրուս երազաւանի, որ այն սակ և Մողավաշտ անուն կարգային (Խոր. Բ. ԽԸ⁷):

2. Տակիտոս-Տարեգրութիւնը. գերբ Բ. զւ. 2. գերբ Ժ.Բ. զւ. 10, 11. — Brotier յաւելուած, գերբ Ժ.Բ. — Garnier-Frères առ Պալայ Royal 215:

3. Անրէին Տիգրան արքայի արքայի և ի բացանած շատափ, բային ի վերայ զերեզմանին շինեալ զի ի զուցն աննայն անցաւոր վայելեցնեալ և նըստարիցն շիրո երկօթիք: (Խոր. Բ. ԿԶ):

4. Նոյն շարանակութեան բրասունէան շրջանի մէջ աւելի իմ շենութեամբ, նոր կրօնիք հիմնակիրներու ներկայութեամբ, որպէս յիշ հանդիպեցան իրարու Տքրուու կիրարու յետ մեռադրութեան զառնաւով կեսարիքայն:

5. Ազա հրամատ տար յերեւ բագին մէննին ուխտաւոր լինել պատկեաց կոոց դիցն պաշտաման, սպիտակ ցւոց և սպիտակ նորագործու սպիթին և արձաթելն զարդուք ի վերջաւոր փողոփողաւս նայլնու: (Ազաթ. Էջ 33-34 Վ. Անեսիկ 1862):

6. Նաև վնակորորդ ևս հանէր յամնայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարզեն քրմացն շնորհէր: (Ազաթ. Էջ 34):

մ'ունիցաւ Հայաստանի և Արշակունի տանը հետ, որով ուզեց քաւել գործուած եղեն և հայր լինել աշխարհին: Խորենացի կը պատմէ որ Արտաշիր Պարսիկն զեղեցկապէս կարգի դրաւ Հայոց աշխարհը և թագէն ու Այրարատի բնակութենէն զրկուած Արշակունիքն կը վերադարձընէ նոյն տեղերը, եկամուտ և ոռճիկ կը կապէ ինչպէս որ էր յառաջն, և մեհնից պաշտամունքն ես աւելի կը ճոխացնէ: Բագաւանի մէջ Որմզդական¹ հորն կը հրամայէ անշէջ պահել: Անշուշտ անոր համար որ Մաժանի զերեզմանն հոն էր և վաղարշ աշխարհախումբ տօն հաստատեր էր իրը համապատասխան Պարսից կրօնքին:

Քրմական պաշտամունքն և պատին այնքան բնական դարձած էր Արշակունի ցեղին մէջ, որ Արտաշիր և ոչ վայրկեան մը կը վարանի իւր ուսերիմ թշնամիրը վերահաստատել իրենց նախկին տեղերն մտիւք և ոռճկօք: Ասով Արտաշիր ուզեց սիրաշահել զԱրշակունիս, անով ձգել առ ինքն զշայս և ապահովել իւր տիրապետութիւնը Հայաստանի վրայ, և ամուր պարիսպ մը կանգնել Հոռվմէացւոց դէմ, և չփալեցաւ: Մեպտիմոն Սեերոսի և Խոսրովու պարտումէն յետոյ, Հայաստան մօտ քառասուն տարի մնաց Պարսից գերիշխանութեան տակ մինչև որ Դիոկետիանոսի և Գաղերիսով երկու բանակներն վերջնական յազթութիւն տանելով, Դիոկետիանոս զՀոռվմայ պաշտպանեալն Տըրդատ, որդին Խոսրովու, Հայոց թագաւոր պսակեց: Տըրդատ սնած և մեծացած Հոռվմէական ոգւով, վեհապետական շքեղ պատիւներն իւր վրայ ամփոփելու և ոչ մի վայրկեան վարանած լինելու չէ: Հայրենի զահու հետ ժառանգեց նաև Քիմապետական պաշտօնն, և առաջին տարիէն սկսած Անահայ մեհենասեղից կը զեգերի զոհեր մատուցանելու²: Եւ ահա այդտեղ երկան կ'ելլէ Գրիգորի բրիստոնէութիւնն և կը սկսի ծագիլ Հայաստանի բրիստոնէութեան արշալոյն:

* * *

Գրիգոր Լուսաւորչի ազգաբանութեան մասին առաջին գրողն է Ազաթանգեռոս, յաջողակ քարտուղար Տըրդատայ, կը յիշէ զԱնակ հայրն և ապա եղերական սպանումն Խոսրովի՝ Անակայ ձեռքով, սորա տոհմի ջնջումն և դայեկաց ձեռքով Գրիգորի գողացումն և ի կեսարիա փախուստն: Խակ Խորենացին այսքանով չբաւականանալով, հարկ կը համարի երկար ցեղաբանութիւն մ'անել, որով Գրիգորի նախնիքն կը լինին Արշակունի զարմով³: Անակայ արշակունի լինելն հաւաստի կառելի է համարել, բայց թէ նա եղած է նահապետ Պարսկաստանի թագաւորող ցեղին, որ Արշակ մեծէն կ'իջնէր մինչև Արտաւան Արշակունի, կը մնայ տարակուսական: Քանզի անիմանալի է թէ ինչո՞ւ մինչ Խոս-

1. Ի Մհական մեհեանն անուանեալ որդույն Արտազդայ, (Ագաթ. էջ 593. Վճեաբէկ 1862):

2. Յառաջին ամի Տըրդատայ արքայութեան Հայոց մեծաց, խաղացին եկին հասին յլշեցաց զաւու, ի զեւու Նըրիզա, ի մեհեանն Անահապետն, զի անդ զոհս մատուցեն: (Ագաթան. էջ 49):

3. Յոր հրապուրեալ Անակայ, որ էր ի ցեղէն Սուրենեան Պահլաւէ, յանձն առնու սպասանել զԽոսրով: (Խոր. Բ. Աւ. Հ. Պ.):

րով։ Արտաւանայ մահու վրէժն լուծելու համար, և վերստին ի գահ հանելու իւր «ազգակիցներն» հրաւէք կ'ուղարկէ Անակին և միւս երկու տուներուն միանալ իրեն հետ կոռուկու Արտաշրի դէմ, մերժութիւն կը ստանայ, մինչ նորա աւելի յարեալ են սրտի մոտց Սասանականի տէրութեան՝ իսկ ընդ հակառակն սիրով կ'ընդգրկէ Արտաշրի առաջարկն դաւով սպանանել խոսրով, անհամեմատ աւելի նուազ վարժատորութեան մը համար Փօխանակ ամբողջական երկրի տիրապետութեան և թագաւորութեան, գոհ կը լինի վարձատրութեամբ երկրորդական զահին և սեփական գաւառին։ Սակայն Անակ ըմբռնած լինելու էր որ ակնյայսնի և անվրէպ մահուան կը զիմէր, իւր ազգի և տոհմի բնաջնջ լինելուն ստուգութեամբ։ Այսքան անմիտ եղած լինելու չէ, այնքան յանդուզն և վտանգաւոր գործի ձեռք զարնողն։ Ինչո՞վ բացատրել այս ժութ պատմութիւնն։ Մենք մեր առանձին տեսութիւնն բացատրելու համար, հարկ կը համարիմք վերադառնալ բնիկ հայկական Արշակունի տան պատմութեան և անոր առաջնորդութեամբ հետազոտել Անակի ձննդարանութիւնն։ Ասոր համար պէտք է Վահունեաց ցեղի պատմութիւնը երկրորդէլ, ինդրոյ հանգոյցն անոր մէջ թաղուած է։

Վահագնի սերունդէն իջած Վահունեաց տոհմն, որոց սեփականութիւնն էր Տարօն և ըրմական պաշտօնն, սկսել էին այն գերը խաղալ Հայաստանի մէջ, ինչ որ ունեցան եղիպտական ըրմելն, որը անվիճելի գերակշռութիւն մը ձեռք բերած էին երկրի քաղաքական վարչութեան մէջ։ Հայաստանի ամենալաւ գաւառներն այդ ցեղի ժառանգութիւնն էին և սեփականներ էին զիխաւոր ութ մեծնատեղից, Արմափր, Աշտիշատ, Բագաւան, Երէզ և Անի և այլն. ուր աշխարհախումբ տօներուն կը հաւացուէր ստուար բազմութիւն ուխտաւորաց, որոնք կրօնական երկիւղածութեան և պատկառու հպատակութեան հետ, ի զարձին կը տանէին իրենց տներն Վահունեաց փառքի և իշխանութեան տպաւութիւնը։

Նախկին Արշակունի թագաւորներ, ազգական զգացմունքներութարմութեամբ, շատ համերաշխ ապրեցան ըրմական զասակարգի հետ, և մեծ նշանակութիւն կու տային անոնց գործելակերպին կարեոր զիրց մը կը ստանան երբ Արտաշէսի ժամանակ կոոց արձաններ բերւում են Յունաստանէն. Վահունդիք ըստ կամս անոնց տեղն և պաշտամունքը կը սահմանեն։ Այսկայն այդ պերճութիւնն և խրոխտանքը զգգուց զջիգրան միջին, պատրուակ բռնելով Հերակլի արձանը, որ Վահունդիք նմանցնելով իրենց վահագնն, կանգնել էին իրենց սեփական զիւզում, պաշտօննէց արաւ զիրենց, որի հետ ասացինց, կորուսին նաև Տանուտէրական պատիւն, որով և զիւզոր յարցունի զրաւեց Տիգրան։

Ուրդ մի մեծ Նախարարական թագաղիք զարմէ տուն, այսպէս յանիրաւի ինկնալով իւր պատուէն և ստացուածքն, կարո՞դ էր հաշտ աշքով նայել Արշակունի տան վրայ, թէ և ազգա մի և նոյն ծագումէն սերած լինին։ Յայտնի է եղրայրական թշնամութիւնն աւելի խիստ է իւր ազ-

6. Զի թէգտ և էր ինը (Խորով) է մեծի արտառութեան վասն բնութեան երայրութեան ազգատումին, զի հազարնդեցն ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Սատարացոյն և մոդ նմին միամտեցան։ (Ազաթ. 32. Անետ. 1862.)

գականի հետ քան օտարին, ուստի երբէց Վահունեաց ցեղն կարո՞ղ էր մոռանալ այդ անարգանցն, ստորացումն, ազատ և տանուտէրական իշխանութենէն ինկնալն ի շարս սոսկականաց և ի հեճուկս կրել նախատական տիտղոս մը «կարճազատք»։ Յարմար առթի կը սպասէին վրէժը հանելու և շատ չ'ուշացաւ։ Հոռվէտական և խոսրովու բանակներ բնաջինջ եղեր էին պարսկական կռուի մէջ, Արտաշիր յաղթանակաւ կ'արշաւէ Հայաստան։ Խոսրովու դիրքը այլ ևս խախտեր էր, չէր այլ ևս այն հզօր թագաւորը, որ Ազաթանգեղոսի ասելով տասը ծփ տարիներ Արտաշիրը մինչև Հնդկաստան փախուցեր էր։ Հոռվամայեցիր և զաշնակից ազգեր թողեր էին զինքը մինակ։ ուստի եթէ յաջողէր զնա բառնալ մէջտեղէն, անարգել կը տիրէր Հայաստանի, առանց մի կաթիլ արին թափելու, բանզի Արտաշը թշնամութիւնն Հայոց գէմ չէր՝ այլ Հոռվմայեցուց։ ուստի նպատակ դրած էր սիրով նուանել զշայս քան բռնութեամբ։ Ահա այս պարագային Արշավիր կարող եղաւ երկրորդական զահու և սեփական զաւոփի խոստմամբ զրաւել առ ինքն զինակ, կարճազատք Նահապետն, և անով իբրև մերձաւորի խոսրովու՝ զաւաճանութեամբ յաջողցուց սպանութիւնն և Հայաստան մտնելով, «զեղեցկապէս կը յարդարէ զայն»։

Եթէ Անակ, ինչպէս կը պատմէ Ազաթանգեղոս, մի եկուոր էր, նորա ազգատոնին կոտորելու ժամանակ անկարելի էր երկու մանկունք՝ ազատել և փախուցանել մին Պարսկաստան, միւսն ի կողմանս Յունաց, Քանզի այսպիսի աղիտաւոր զէպքեր երբ հանդիպեր են Հայոց արքունիքում, Կոտորածից մի կամ երկու մանուկ ազատողներն եղած են մեծամեծ Նախարարներ և սպարապետներ, ինչպէս կը պատմէ Բուզանդ, և ոչ թէ դայեկներ, օտար և անձանօթ երկրի մէջ, թագաւորասպանի զաւակներ կարողանացին փախուցանել և ազատել զրչով կարելի բան է, բայց ոչ իրականութեամբ։ անոր համար մեզ կը թուի որ Անակ վահունեաց ցեղի մի Նահապետ եղած է, որ կանխաւ խոռված խոսրովէն զնացեր էր առ Արտաշիր, և ապա Խոսրովու պարտութենէն յետոյ, նա կը խոստանայ Տիգրանէն յափշտակուած երկրորդական զահն, որ էր Քրմապետութիւնն և իւր սեփական Տիգրան և Աշտիշատն վերադարձնել, եթէ յաջողէր սպաննել զխոսրով, զոր յանձն կ'առնու Անակ թէ՛ վրէժ լուծելու և թէ վերականգնելու իւր Տունն։ Ազաթանգեղոսի պատմածն այնքան մեզի անբնական եկած էր որ ի սկզբանէ կասկած յարուցեր էր թէ մի ինչ որ եկուոր անկարելի էր որ կարողանար դաւաճանել թագաւորին, եթէ Անակ մտերիմ ազգական եղած չլինէր խոսրովու, որ անկասկած և միայնակ կը մնայ թագաւորի մօտ, եղիշէ մեր կարծիքն կը հաստատէ մինչ յիւր պատմութեան բացայայտ կերպով կը գրէ Տրդատայ համար, «որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախոշոց հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ մնաւ յերկիդ թունաց»։

1. Խոր. զերթ թ. աւ. Հիւ։

2. Խորենացի մի միայն աշայ յիշէ, գհերիգոր. (Խոր. թ. Հիւ.)։

3. Բուզանդ. Դար. Գ. աւ. մի. Եւ Խոր. զերթ Գ. աւ. Լ.Բ. Կայլն։

4. Եղիշէ. էլ 182.

ԶԳրիգոր փախցնելուն հակապատկեր կը ներկայացնէ խոսրովու տան կոտորածն և Տրդատայ փախցնելու պարագաներն ։ Հոս մեծ նախարարներ կը զործեն և զիւրին էր նոցա անվտանգ իրենց թագաւորի ժառանգը ապրեցնել և տանել Հովովմէական կայսերաց արքունիքն, ուր վաղուց սովորութիւն ունին Հայ թագաւորաց մանուկներ կամ իրեւ պատանդ կամ դաստիարակութեան համար զրկուելու¹:

Ահա երկու մանուկներ վիճակակից աղէտից մէջ, բայց բաղդաւոր ծննդեամբ, երկուրն ալ ազնուական արենէ բղխած, անծանօթ իրարուց կը սնանին և մեծնան, յունական կրթութեամբ կը զարգանան, մինչ զէնքի կը դիմէ, բնազդմամբ իւր թագաւորական արեան, իսկ միւսն զրոց վարդապետութեան, նոյնպէս աւանդական ժառանգութեամբ: Տրդատ կոչուած է թագաւորելու, զօրաց զլուխ անցնելու. իսկ Գրիգոր քահանայագործելու, հովիւ լինելու ժողովրդեան: Գրիգոր անծանօթ չի մեծնար կեսարիոյ մէջ. Արտաշըն փախստական նախարարազունք կան անդ, որ մի օր մատն և տուր պիտի լինին առ Տրդատ Գրիգորի Անակի որդին լինելու²: Սակայն Գրիգոր սնած աւետարանական վարդապետութեամբ, գեհանձնաբար կը զնայ առ Տրդատ բարողելու ճրշմարտութիւնը³, և իրրե Քրիստոսի պաշտօնեայ զինքը անոր ծառայութեան կու տայ և հնազանդութեամբ կը ծառայէ անոր⁴ յառաջ բան զթագաւորելը: Տրդատ տակաւին Դիոկղեստանոսի բանակի մէջն արդէն իմացեր էր որ Գրիգոր ըրիստոնեայ էր⁵, զուցէ տարակուսանցով զիտէր և Անակայ որդի լինելը: Գրիգորի իսկութիւնն կը ստուգուի այն ատեն երբ Տրդատ իւր յաղթութեանց համար ի շնորհակալութիւն կը հրամայէ Գրիգորի զուհի մատուցանել հայրենի աստուածներուն:

Տրդատ անշուշտ պատահարար չի հրամայեր Գրիգորի այսպիսի մի մեծ պաշտօն և պատիւ, այլ իրրե վարժատութիւն միամիտ ծառայութեանը և աշխատութեանը՝ որով գոն արած էր զՏրդատ. սա ևս միտքը զրած լինելով զնա բարձրցացնել (Կեցուցանել⁶) կը կոչէ քրութեան պաշտօնին, որոց անկ էր պասկներ և թաւ ոստեր ծառերու նուէր տալ Անահիտի պատկերին կամ բաջ վահանգնի արձանին: Գրիգոր կը հրամարի այդ պատիւն իրրե ըրիստոնեայ, չուզելով սուտ աստուածներու պաշտօնեայ լինել:

Ով զիտէ հնոց բարքերը, ներկայ պարագային մէջ դժուար է հաւատալ Ագաթանգեղոսի խօսքերուն որ Գրիգոր մի օտարական և ան-

1. Ուրոյ (Տրդատ) հասեալ ի կեսարիա յուզգը ի նախարարացն ընդ առաջ լինէին: Եւ եւ լեալ յաշխարհս, զանէ զՇտայ... զի թէպէտ և ոչ ծանեալ զծմարտութիւն յաղասն Աստուծոյ, սակայն զասութիւն կոսցն զիտաց: Հոյնպէս էր և ասն նորա խօսրովզեռուիւս: (Խոր. Բ. Գ. ԶԲ⁷):

2. Տաճառ իշխան Ալուսաց. սա էր որ յապայն զզացոյց աներոյն իւրոյ Արտաւազդայ... Գրիգորի Անահայ լինի որդի... որպէս հնուտա եղեալ ի նեսարացւոց քաղաքին թմակելու, (Խոր. Բ. Գ. ԶԲ⁸):

3. Բայց... Գրիգոր անցեալ զնաց առ Տրդատ զայրէնեացն հատուցանել պարտիս, կամ որպէս պարու է անել ճշմարտութեամբ: զամանակուն վիճակ մերոյ աշխարհին և զահանաց յութեանն հանդիպութեամբն մարտիրութեամբն զերելով (Խոր. Բ. Գ. ԶԲ⁹):

4. Գրիգորինս... եւ և զնաց առ Տրդատուն ըստ մերս պատամաթ. (Ազաթանգեղոս Էջ 48):

5. Ասկ իրրե զացեալ Տրդատիս վասն Գրիգորի թէ ըրիստոսական պաշտամանն հազորդ է տա... (Ազաթ. Էջ 43):

6. Եւ եւ զու էր զվասամկոց քոց և ուսէի ի մտի կեցուցանել զեեւ, (Ազաթ. Էջ 50):

այսարհիկ մէկն եղած լինի, մինչև Տրդատ նախամեծար բնտրէր քան զրնիկ բռւրմեր այն հոչակաւոր մեհենատեղեացն, որոնք ինչպէս ասացինց կանխաւ հայկազեան սերունդէն էին և ազգակից արշակունի ցեղին. ուստի երբ Տրդատ Գրիգորի կը յանձնէ զոհեր մատուցանել և պսակ դնել կոոր զուխը, կը նշանակէ որ Տրդատ համոզուած էր Գրիգորի ազնուական տոհմէ սերելուն, կամ թերևս իսկ իմացեր էր Վահոննեաց ցեղակից լինելուն, և կամաւոր «ըստ հեշտ պաշտաման» այսինքն՝ վասն յաշտից պաշտօն կատարելու համար մտեր էր Տրդատայ ծառայութեան մէջ: Մի կարևոր հանգամանք որ աւելի որոշ կերպով պիտի պարզուի բրիստոնէական շրջանի մէջ:

* *

Տրդատ աշխարհախումր աւագանով գԳրիգոր կը յուղարկէ ի կեսարիա ձեռնազրութեան համար: Բնական կարգ իրաց այնպէս կը պահանջէ որ նա ի զարձին առաջին հանդիպումն Տրդատայ հետ ունենար և ապա սկսունէր իւր առարելական քարոզութիւնն: Ավայն այնպէս չէ եղած. պատմութեան կարգն այլ է և մեզի կրկին խորհրդածութեան նիւթ կը մատակարարէ: Ա. Գրիգոր ձեռնազրուելէն ետքը անմիջապէս կ'ուղերուի զէպ ի Տարօն¹, ուր էր հոչակաւոր Վահէ վահէան մեհեանն, «յաշտից տեղիք թագաւորացն Հայոց մեծաց»: Նա յառաջ քան զձեռնազրութիւնն, Տրդատայ օգնութեամր քանդել էր Հայոց բոլոր բազիններն, և միայն մնացեր էր այս «ութերորդ պաշտօն հոչակեալ, անուանեալն վիշապաքաղն Վահագնի»: Ինչո՞ւ արգեօց ակն առեր էին, առ երկիւղի՞ թէ վասն պատուի: Զենոր Գլակի պատմութենին պէտք է կարծել որ առ երկիւղի ժամանակ մը յետաձգեր են բրմաց ուժեղութեան և բազմութեան պատճառաւ, որոնք իրենց ոյժն ուզեցին փորձել նաև Ա. Վրթանէսի ժամանակ²: Ավայն հաւանական չէ այս ենթագրութիւնն. քանզի ինչպէս յետոյ ընկնուեցան արցունի բանակաւ, նոյնը մի տարով յառաջ ևս կարող էին կատարել. ուստի կը հետևի որ մի այլ խորհրդով և ծրագրով յետաձգուած էր այդ հըռչակաւոր մեհենի քանդումն:

Թէ Տրդատ և թէ Գրիգոր կամեցած են նոյն նախկին փայլին և վիճակի մէջ պահել զԱշտիշատն, ինչպէս եղած էր հեթանոսութեան դարաշըջանին. ուստի կամեցած են որ նոր կրօնից հիմն կամ սկզբնաւրութիւնն անտի սկսի Անդրանիկ Եկեղեցոյ հիմնարկութեամր, որ առանց եակիսկոպոսական իշխանութեան կարելի չէր: Որով Գրիգոր Երզնկայէն անցնելով ի Սեբաստիա և ապա ի Կեսարիա, աստի հարաւային գետափնեայ ճանապարհով, քերելով Արածանւոյ եզերքը, անցնելով Քար-

1. Եւ իրեն եկն հէս ի սահմանս Հայոց, լուսւ Գրիգորիս թէ Վահէ վահէան մեհեանն մնացեալ է յիրենին Տարօնոյ (Ալպաթ. էջ 600):

2. Արդ որք միանգամ գհնութիւն կուպաշառութեան հեթանոսութեան զոյն սովորութիւն մինչ յայնամ ունէն զպանին, ի մի միարանութիւն ծողովեալը հասանէին իրեւ հազար երկու, խորհուրդ եղեալ ընդ միանանս՝ սպանանել զգահանայապետն Աստուծոյ զԱրթանէս (Բնուզ. Դպ. Գլ. Գլ.):

բերդէն՝ իշեր է Տարօնոյ դաշտն։ Հոն քանդելով Վահէվահեան մեհանն և հիմնելով եկեղեցի, ողղելով սեղան, իսկ և իսկ ըրմաց որդիքներէն 12 հոգի եպիսկոպոս կը ծենաղիէ որոց զիմաւորի անունն է Ալբինո (Հռովմէական անուն մ'է Albino) որ հաւանական է թէ յառաջ ծանօթ եղած է Գրիգորի և Տրդատայ կեսարիոյ մէջ, որով առ կոստանդիիանոս գնացած ժամանակ հետերնին կ'առնուն՝ Գրիգորի այս ցայլն վերահաստատութիւն մ'էր ցահանայապետական իշխանութեան իւր տան և ազգատոնմի մէջ ըրիստոսական կրօնից նափորտով զարդարուած։ յաղթանակ մ'էր որ վահունեաց ցեղն կը տանէր Տիգրանայ անիրաւ յափշտակութեան դէմ, և յետոյ պիտի տեսնենց որ իրենց կալուածոց հետ պիտի վերստանան նաև Տանուտէրական պատիւն յորմէ ինկած էին կարճազատաց դասն։ Գրիգոր ուզեց միանգամայն հասկացնել Հայաստան աշխարհին, որ թէ և ըստ տեսլեան Միածին Որդւոյն նշանակած տեխն լինելու է Աթոռանիստ Եկեղեցին Հայրապետացն Հայոց ըստ եկեղեցական Նորիրապետութեան և իրաւարանութեան, սակայն կամցաւ որ իւր բնիկ նախնեաց սեփականավայրն առաջին եկեղեցոյ հիմնարկութեան նախապատութիւնն վայելէ՝, ինչպէս որ տեսանց հեթանոսութեան շրջանի մէջ, քան այլ մեհեանները Վահէվահեանն էր հնագոյն հիմնարկութիւնն, թէ և յետոյ Բագարանը աւելի շքեղ տօնաւ խըմրութեանց հանդիսավայր դարձաւ։ Եւ Տրդատ Վաղարշապատէն չշարժեցաւ, մինչև որ Գրիգոր չդիմեց գալ ի Բագարան, ուր կամցաւ Տրդատ իւր հանդիպում Գրիգորի հետ, նոյն իրաւացի հպարտութեամբ, որով Գրիգոր պատուեր էր իւր բնավայրը։ Բագարան կը հանգչէին Տրդատայ նախնիք, որոնք սատուածական պաշտօն և պատիւ կ'ընդունէին ի նախնեաց հետ, հոն կը դիմէր Հայաստանի ժողովուրդն իւր համազգային տօնելը տօնելու։ Տրդատ իւր և ժողովրդի մկրտութեամբ ուզեց որ սրբագրծունքն հեթանոս տօնելը է Ալբակունեաց յիշատակն աննոց հետ յաւերժանայ հայ սրտերու մէջ։ Այս զուգազրութեամբ թագաւորական և ցահանայապետական գաւազաններն համհաւասար շուր և իշխանութիւն սկսան բանեցնել իւրացանչիւրն իւր կոչման և շրջանի մէջ։ երկուցն ես զիտակից թէ մէկ ազգէ և մէկ տոհմէ սերած

1. Ալմառու սիբալմամբ կոչուած Խարբերդ։ Մեզ թուի սա լինել խորենացու յիշանն ուր Վաղարքակ և Սորիփերէկս պատերազմով պատահեցան իրարու։ «Բայց պատահն միմեանց առ բարձրաւանդակի միջն բրուգ քարազագամթիւնի, որ այժմ ասի Կողմնիաց»։

2. Ալոյոյր ընդ իւր զմեծ արթեպիկուուսն Գրիգոր և զնորուն որդին զիտակիչն և զեպիստանու։ (Անթ. էջ 650)։

3. Ալյապէն ի Հոռով Մայր ամենայն եկեղեցեաց է Լատերանու եկեղեցին, զի նա է առաջին շինուած եկեղեցին Կոստանդիանոսի ծեսամբ։ իսկ Վաստիկանը կը նեայ կերպոն Եկեղեցական նորիրապետութեան և վարութեան։

4. Զայնու ժամանական երթանք Հասանէր Եպս։ Վարքանէն ի մեծն յառաջին է մայրն եկեղեցեաց Հայոց, որ էս յերկրն Տարծուու (Բուզ. Դա. Գ. զւ. Գ.)։

5. Քանզի այնպէս իսկ սովոր էն եպիսկոպոսավանքն Հայոց, Հանգերծ թագաւորօսն և աշխարհաւումք բարպարեմբանք պատուել ցնոյն տեղին, որ յառաջ էին տեղից պատերաց կողոն, և պապ յանոն սատուածեմբան սրբածուն են են տան ազօթից և տեղի ուխտից ամենայն ուժեւու (Բուզ. Դա. Գ. զւ. Գ.)։ Դարձեալ և յայնմ առոր տան զիտեցաւ յիշատակի մձին Յովհանոս որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագարանի կարգեալ էր։ (Բուզ. Դա. Գ. զւ. Ե.)։

6. Զի թագաւորն դուր աշխարհին և դա, որպէս ասեն, ընդ մի համար են։ (Բուզ. Դա. Գ. զւ. Ե.)։

են, երկուքն ևս արշակունի «ըստ եղբայրութեան բնութեան» բայց բնիկ հայկական թագաղիր իշխանաց պայազատներ¹:

Եթէ Գրիգոր իր զայեկչն լսելով հօր գործերը, բարոյական պարող համարեցաւ երթալ առ Տրդատ իր անձը ծառայութեան տալով փոխարինել եղած անիրաւութեան և եղերան, Տրդատ ևս ոչ պակաս ազնիւ և զեհանձն զզացմամբ ուզեց զարման տանել իւր նախապատի Ցիգրանայ անիրաւութեան վերազարծնելով առ Գրիգոր և առ նորա տոհմայինն բոլոր յափշտակուած գիւղերն և կալուածներ, որոնց ի բնէ սեփական էին Վահունեաց ցեղին, զոր բուզանդ խնամքով երկու անգամ յիշած է Գրիգորի ձեռական իշխանութիւնն անուանելով² և ասոնց էին տասն և հինգ գաւառներ, որոց զիշաւորներն էին Այրարատ, Դարձանաղի, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփիք³, իբրև սեփական ի բնիկ Գրիգորի տանն և ազգին: Տրդատ ոչ միայն հողերը զարծուց առ Գրիգոր, այլ նաև Տանուաէրական իշխանութիւնն շնորհեց յանձին Գրիգորի և իրեն յաջորդներուն, իբրև արքայի կողմակալ, վարիչ և զատաւոր իրեն ստորագրեալ գաւառներուն⁴, նաև վերակացու և հրամանատար տեսուչ և հոգարարձու ամենայն եկեղեցիներուն Հայոց Մեծաց:

Տրդատայ այս առատաձեռնութիւնն իսկ փաստ մ'է մեր կարծեաց հաստատելու թէ Արշակունիք Հայկազեան թագաղիր իշխաններու պայազաններն են և «ըստ եղբայրութեան բնութեան» կոչուած Արշակունիք իրը Արշակայ պաշտպանեալ և ազատազրեալ, իսկ թագաւորական զարմն Վահագնչն սկսած երեք զիլաւոր ճիշերու բաժնուած էր, Այրարատան թագրաստունն և Վահունիքն. որով իբրև եղբակացութիւն կը հետեի թէ Գրիգորի նախնիք Վահունիք էին և Տրդատայ ձեռամբ վերաստացան իրենց բնիկ սեփական գաւառներն և Տանուաէրական իշխանութիւնն վահանայապետականին հետ զուգած: Այս եղբակացութեան որբան յաջող լինելն թողում ուշիմ ընթերցողաց դատել. բայց մեզի կարևոր էր մեր առաջարկեալ հարցին լուծումն տալու համար, որ խոստացանք ի սկզբան Ա. Մեսրովայ ծագման և ազգի վրայ խօսել՝ լուսաբանելով կորեան հակիրճ խօսքերն և ջանալով ապացուցանել թէ Ա. Մեսրովը Գրիգորի ցեղակից էր և թագաւորական տան ազգական որով Վահունեաց ազգի Տանուաէրն և ապա զրոց գիւտի և զպրութեան Հայր, Հայոց ազգին և Եկեղեցոյն կեցուցիչ:

Հ. ԳԱԲՐԻԵԼ Վ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

• Շարայարելի

1. Եւ որպէս ետուն զրոյց որբ ընդ նմա եկեալ էին, թէ ազգակից համարին զսա և մեր տաւոր (այսինքն արենակից) թագաւորին (Բուզ. Դա. Գ. Աւ. Ե.)

2. Բուզանդ. Դա. Գ. Աւ. Ժի:

3. Զայնու ժամանական Ա. Ներէս շրէնք ընդ իւր ձեռական իշխանութիւնն. զի հգեստասան զայն ծնուական իշխանութիւնը ունին իբրև սեփական ի բնմէ, առանձին առող նույն է կարգեալ: (Բուզ. Դա. Գ. Աւ. Ժի)

4. Գանիէլ... Վերակցու և զիլաւոր Եկեղեցաց (Եկեղեցաց) հաշանզին Տարօնոյ, Գրիգորի ձեռական իշխանութեանն կորման մասն զորակալութիւն, մեծի զատաւորութիւնն ունէր զիլաւորին զայն առանձինն, այլ վերակցու և հրամատար առանչ և հոգարարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամենայն տեղին: (Բուզ. Դա. Գ. Աւ. Ժի)